

Մշակութային և Հասարակական
 Երկարաթաթերը
Յոյս
 1200 թուման
 Հայաստանում 320 դրամ

«ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ» ԳՐՔԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ



ԱՅՍ ՀԱՄԱՐՈՒՄ

- 2 **Թեհրանի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու 30-ամեակը**
- 3 **Գինեձօն-շնորհանդես` Լեւոն Ահարոնեանի «Փոթորկոտ կեանքիս օրերը» գրքի Արմինե Մելիք-Իսրայելեան**
- 6 **Պեղանկարներ են անհետանում նաև Հայաստանում**
- 7 **Ինչպես գոհուեց Մոնթեն էդիկ Բաղդասարեան**
- 17 **Շնչառությունը եւ առողջությունը**
- 20 **Մարդն ու կատուն` լուսանկարներ**
- 22 **Խոհանոց**
- 23 **Տնտեսուհու անկիւն Քաթրին Եաղուբի**
- 24 **Մարգանք Արման Տէր Ստեփանեան**

Մշակութային եւ Հասարակական

Յոյս

Երկշաբաթաթերթ

6-րդ սարի, քիւ125, Յունիս 27, 2012,
1200 քուման
Հայաստանում 320 դրամ

- 8 **«Պատմություն և Նոր Զուղայի» գրքի պատմությունը**
- 8 **Իրանահայության պատմության մտացած էջեր Ռոբերթ Սաֆարեան**
- 9 **Գիրքի հրատարակությունները մէկ հայացքով**
- 11 **Յարութիւն Տէր. Յովհաննէանի կենսագրությունը**
- 12 **Նախաբանից Յարութիւն Տէր. Յովհաննէան**
- 13 **Զուղայի բաժանման պատճառներն ու աներածությունը Յարութիւն Տէր. Յովհաննէան**



Պ ա ր ս կ ւ ր ւ ւ ն ք ա ժ ի ն

2	Այս համարի պարսկերէն էջերում		Լուսագիտութիւն		Ռոբերթ Սաֆարեան
3	ԻԻՀ մշակույթի նախարարութեան ներկայացուցիչները երեւանում «Կեանքիս փոսորկոտ օրերը» գրքի շնորհանդեսում	5	Իրան-Հայաստան երկաթագծի նշանակությունը (ք. մաս) Սարգիս Մանուկեան	9	Երեւանը Պետո Պողոսեանի ջրաներկ գործերում
4	Ճգնաւորեանի վերադարձը Հայաստանի կամերային	6	Ամենամեծ սփիւռքը, հայերը Ռուսաստանում (ք. մաս) Մառինա Ուսատչեւա	11	Հարցազրոյց Երաժշտագետ Էմանուէլ Մելիք-Սալանեանի հետ Վարուժ Սուրենեան / Ռազմիկ Ամիրխանեան
		8	Կենցաղը որպէս մշակույթ		

<p>Յոյս Հասարակական-մշակութային երկշաբաթաթերթ</p> <p>Արտօճատի՝ Լեւոն Ահարոնեան</p> <p>Խմբագիր՝ Ռոբերթ Սաֆարեան</p>	<p>Խմբագրական կազմ՝ Քարմեն Ազարեան, Լիա Խաչիկեան, Գարուն Սարգսեան, Արմինե Մելիք-Իսրայելեան</p> <p>Պեղարւեստական ձեւաւորում՝ Լիա Խաչիկեան</p>	<p>Հայերէն բաժնի սրբագրիչ՝ Քարմեն Ազարեան</p> <p>Կայք Քաջիկ Սաֆարեան</p> <p>Մարգական Արման Տէր Ստեփանեան</p> <p>Բաժանորդագրութիւն Քաթրին Եաղուբի</p>	<p>Հասցէ՝ Թեհրան, Էնդելար պողոտայ, Վալի Ասր քառուղի համար 1048 66495180 66492693</p> <p>Հեռախօս-հեռապատճեն՝ 66495208</p> <p>hooy@inbox.com www.hooy.com</p>
---	--	---	--


ՅՈՎԻԿ ՄԻՆԱՍԵԱՆԻ ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹԵԱՄԲ ԼՈՅՍ Է ՏԵՍԵԼ «ԹԵՂԵՆԻ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԼՈՐԻՉ ԵԿԵՂԵՑՈՒ ԿԱՌՈՒՅՄԱՆ ՅՈ-ԱՄԵԱԿ» ԳԻՐՔԸ

Շնորհակալութեամբ ստացել ենք Յովիկ Մինասեանի աշխատասիրութեամբ լոյս տեսած Թեհրանի Մաջիդիէ (Ձէյթուն) թաղամասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցու պատմութեանը նւիրած գունաւոր եւ պատկերազարդ գրքոյկը: Ստորեւ ներկայացնում ենք հատածներ այդ գրքից:

«Ինչ վերաբերում է Մաջիդիէ (Ձէյթուն) քաղաքամասին, նշենք, որ այն Թեհրանի հայաբնակ քաղաքամասերից մէկն է, որի հիմքը դրել է դեռ 1950-ական թականներին, երբ 1946 թականի Հայաստան ներգաղթը կասեցւում է եւ մեծ թուով հայեր Իրանի հայաբնակ գաւառներից ու Թեհրանի տարբեր շրջաններից բնակութիւն են հաստատում այս քաղաքամասում:

Սկզբնական շրջանում քաղաքամասը զուրկ է եղել ամենանախնական հնարաւորութիւններից, սակայն ազգային իշխանութիւնների, բարեգործական միութիւնների եւ ազգանէր բարերարների նիւթական ու բարոյական օժանդակութիւնների շնորհիւ՝ այն աստիճանաբար ամէն տեսակէտից զարգացում է արձանագրում:

1956 թականին Ձէյթուն քաղաքամասում բնակւում էին 150 հայ ընտանիքներ, որոնք ունէին 93 դպրոցական տարիքի աշակերտներ: Այդ իսկ պատճառով միտք է յղացւում՝ հիմնելու մի ազգապատկան կրթօջախ, որի անհրաժեշտութիւնը խիստ զգալի էր: Այս ցանկութիւնն իրականանում է քաղաքամասի առաջին դպրոցը՝



«Շիրւանգաղէ» անւամբ, որը հետագայում վերանւանւում է «Արարատ»: Հետզհետէ այդ դպրոցում են կենտրոնանում քաղաքամասի ազգային-կրօնական եւ մշակութային բոլոր աշխատանքները, նաեւ այն մի առ ժամանակ ծառայում է որպէս եկեղեցի: 1981 թականից եկեղեցական արարողութիւնները կատարւում են «Սուքերեան» սրահում, մինչեւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցու աշխատանքների սկսումը՝ 1983 թականին:

Ձէյթուն քաղաքամասի հայ բնակչութեան մեծ փափագն էր եկեղեցի ունենալը: Երկար սպասելուց յետոյ՝ վերջապէս իրականացաւ այդ ցանկութիւնը եւ նրանք բախտ ունեցան՝ տեսնելու մի եկեղեցի, ուր կարող էին իրենց աղօթքները մատուցել Աստծուն: Եկեղեցու հողամասը գնելու նպատակով Տէր Գրիգոր աւ. քինյ. Տէր-Պետրոսեանի նախագահութեամբ եւ քաղաքամասի մի շարք

ազնւահոգի անձանց օժանդակութեամբ 1979 թականին կեանքի կոչւեց Հանգանակիչ մարմին, որը կարճ ժամանակահատուածում քաղաքամասի բնակիչներից հանգանակեց 1,400,000 թուման: Այս գումարին աւելացւեց Թ.Հ.Թեմական խորհրդի ներդրած գումարը, որով գնւեց 1600 քառ. մետր տարածութեամբ հողամաս: Հետագայում Թեմական խորհրդի միջոցով գնւեցին յարակից երկու բնակարաններ, որոնցով ներկայում եկեղեցու տարածքը կազմում է 1834.5 քառ. մետր: Ունի ընդհանուր առմամբ 450 քառ.մետր կառուցւածք, իսկ եկեղեցուն յատկացւած կառոյցը կազմում է 340 քառ.մետր: Գմբէթի բարձրութիւնը յատակից 19.90 մետր է, որը ամենաբարձրն է Թեհրանի հայոց միւս եկեղեցիների գմբէթների համեմատ: Եկեղեցու երկարութիւնը շուրջ 26 մետր է, լայնքը՝ 19.30 մետր: Կառուցման համար օգտագործւել են՝ մետաղ, աղիւս եւ ցեմենտ շինանիւթերը:

Եկեղեցու զանգերը բերւել են Արաքի Ս. Մեսրոպ եկեղեցուց, որոնցից մէկի վրայ մակագրւած է 1896 թականը:

Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցու հողի օրինութեան արարողութիւնը կատարւեց 1976 թականին:


Եկեղեցու կառուցման աշխատանքներն աւարտւեցին 1982 թականի ամռանը: Օծումը կատարւեց 1983 թականի ուրբաթ Յունւարի 14-ին՝ Թեհրանի թեմի ժամանակի առաջնորդ Տ. Արտակ արք. Մանուկեանի ձեռամբ:

ԳԻՆԵՉՈՆ - ՇՆՈՐՀԱՆՂԷՄ՝ ԼԵՒՈՆ ԱՀԱՐՈՆԵԱՆԻ «ՓՈԹՈՐԿՈՏ ԿԵԱՆՔԻՍ ՕՐԵՐԸ» ԳՐՔԻ


Արմինե Մելիք-Իսրայելեան

Մայիսի 30-ին Հայաստանի Ազգային Պատկերասրահում տեղի ունեցաւ իրանահայ ազգային գործիչ, յայտնի գոծարար, բարերար, մտաւորական Լեւոն Ահարոնեանի «Փոթորկոտ կեանքիս օրերը» հայերէն երկհատորեակի գինեձօն-շնորհանդէսը: Հայրենի զեղաշուք արւեստի կենտրոնի հանդիսութիւնները սրահը պարուրել էր տօնական մթնոլորտով, բաւականին յագեցած եւ արւեստաշունչ մթնոլորտով:

- Ազգային պատկերասրահը շատ մեծ զգացմունքով եւ յարգանքով իր սրահների տակ ընդունում է մի մեծ մարդու, մեծ բարերարի ու ազգային գործիչ, որի հրաշալի գրքին ծանօթ եմ եւ ուզում եմ շնորհաւորել Լեւոն Ահարոնեանին իր մեծ կեանքի համար եւ համոզւած եմ, որ այսօր իրենց ելոյթներով հանդէս եկողները կը ներկայացնեն Լեւոն Ահարոնեանի գրքի բովանդակութիւնը, իսկ ես ուրախ եմ ընդունել մեր յարկի տակ հրաշալի մարդուն, - իր ելոյթում նշեց պատկերասրահի տնօրէն, զեղանկարիչ, պրոֆեսոր Փարաւոն Միրզոյեանը, որի ողջոյնի խօսքով սկսեց գրքի եւ հեղինակի ներկայացումը հիւրերին: Ներկաների եւ իրենց խօսքով հանդէս եկողների մէջ էին հայ մտաւորականներ, քաղաքական եւ պետական գործիչներ, հոգեւոր բարձրաստիճան դասի ներկայացուցիչներ: Իրենց ողջոյնի



խօսքն էին բերել հեղինակին եւ Իրան-Հայաստան բարեկամութեան լաւագոյն ջատագովին նաեւ պարսիկ մտաւորականներն ու գործիչները, կրօնական փոքրամասնութիւնների հարցերով յանձնաժողովի նախագահ պարոն Սաիդ Թաղաւին եւ Իրանի հրատարակչութեան պատասխանատու դոկտոր Վասֆին իրենց ելոյթներում անթաքոյց ներկայացրեցին իրենց հիացմունքը Լեւոն Ահարոնեան պատւաւոր հայի ու Իրանի պատւաւոր քաղաքացու հանդէպ, ինչպէս նաեւ արժեւորեցին այն հսկայական աշխատանքը, որի շնորհիւ պարսիկ եւ հայ ընթերցողն առիթ ունի առընչելու այս երկհատոր մենագրութեան հետ, որը լինելով հեղինակի կենսագրական պատումը, հասարակական եւ քաղաքական յուշագրութիւն է եւ արժեքաւոր տեղեկատու հանրագիտարան երկու ազգերի յարաբերութիւնների ու իրանահայ համայնքի պատմութեան մի անկաշառ արձանագրութիւն իր լոյս ու ստւերով: Մեծարգոյ պարոնայք ՀՀ ԱԺ պատգամաւոր Խոսրով Յարութիւնեանի, ՀՀ Բնապահպանութեան նախարարութեան փոխնախարար Արտաշէս Չիրոյեանի, Իրանի Իսլամական հանրապետութիւնում Հայաստանի դեսպան Գրիգոր Առաքելեանի ելոյթներում կարեւորում էր գրքի հեղինակի մարդկային կերպարը, նրա բարոյական ըմբռնումներն ու արարող



թիւն է եւ արժեքաւոր տեղեկատու հանրագիտարան երկու ազգերի յարաբերութիւնների ու իրանահայ համայնքի պատմութեան մի անկաշառ արձանագրութիւն իր լոյս ու ստւերով: Մեծարգոյ պարոնայք ՀՀ ԱԺ պատգամաւոր Խոսրով Յարութիւնեանի, ՀՀ Բնապահպանութեան նախարարութեան փոխնախարար Արտաշէս Չիրոյեանի, Իրանի Իսլամական հանրապետութիւնում Հայաստանի դեսպան Գրիգոր Առաքելեանի ելոյթներում կարեւորում էր գրքի հեղինակի մարդկային կերպարը, նրա բարոյական ըմբռնումներն ու արարող



Օրայ առօրե արտայայտեցին՝ Ազգային պատկերասրահի տնօրեն պրոֆ. Փառաուն Միրզոյեանը, ԻԻՀ կրօնական փոքրամասնութիւնների յանձնաժողովի նախագահ Սաիդ Թաղաւին, Իրանում ՀՀ դեսպան Գրիգոր Առաքելեանը, ՀՀ Բնապահպանութեան նախարարի ներկայացուցիչ Արտաշէս Զիրոյեանը, Ամենայն Հայոց Կաթողիկոսի ներկայացուցիչ Անուշահան Սրբազանը, ԻԻՀ Մշակոյթի փոխնախարար պրոֆ. Վասիլին, «Գրական» թերթի խմբագիր Սամէլ Կոսեանը, ԹՀԹ առաջնորդ Տ.Սեպուհ արք. Սարգսեանը

Լուսանկարները՝ Գոհար Լալայեան



ուղին: Պարոն Լեւոնի գոյութիւնը վկայում է, որ մենք հայերս ուր էլ գտնուելիս լինենք հզօրացնում ենք տւեալ երկրի մշակոյթը, տնտեսութիւնը, մեր նպաստն ենք բերում դրական առումով, - իր ելոյթի ա-

տեսակին բնորոշ էութիւնը, որը մի գործող կամուրջ է երկու դրացի ու բարեկամ ժողովուրդների համար իր գործունէութիւնը ի նպաստ հայ-իրանական կապերին ծաւալող անհատ, որի արդիւնքն է նաեւ նրա հեղինակած երկհատոր գիրքը: ՀՀ Բնապահպանութեան նախարարի կողմից շնորհաւորանք յղելով պարոն Ահարոնեանին Արտաշէս Զիրոյեանը խօսեց Լեւոն Ահարոնեանի կողմից ՀՀ-ում բնապահպանութեանը նւիրած հարուստ գործու-

նէութեան մասին, բնութեան թանգարանի վերականգնման մասին: - Բնութեան պահպանութեան թանգարանը մի զարդ է Հայաստանում եւ այդտեղ մեծ է պարոն Ահարոնեանի ներդրումը, թէ նիւթական եւ թէ հոգեւոր առումով: Պարոն Լեւոնը մեծ անհատականութիւն է, որն իրօք փոթորկալից կեանք է ապրել եւ այդ կեանքը միայն իրենը չէ, փոթորկալից բառի մէջ ընդգրկում է ողջ հայ ժողովրդի դարաւոր ճակատագիրն ու անցած



լարտին նշեց պարոն Զիրոյեանը:

- Պարոն Ահարոնեանը մշտապես եղել է Հայաստանի Հանրապետության դեսպանատան կողքին, միշտ հաղորդակից է եղել մեր դժարութիւններին եւ մեր ուրախութիւններին, կիսել դրանք մեզ հետ: Նա իրաւացիօրէն հարիւր տոկոսով Իրանի Իսլամական հանրապետութեան քաղաքացի է եւ հարիւր տոկոսով հայ, որի շունչը մենք բոլորս զգացել ենք տարիների ընթացքում, - իր ելոյթում փաստեց ԻԻՀ-ում ՀՀ արտակարգ եւ լիազօր դեսպան մեծարգոյ պարոն Գրիգոր Առաքելեանը:

- Գրքի մասին խօսել գնահատական տալու համար նշանակում է ճանաչել հեղինակին, իսկ հեղինակին ճանաչել կարելի է ծանօթանալով գրքի բովանդակութեանը, փաստօրէն պարոն Ահարոնեանը նոյնանում է իր իսկ վրձնած կտաւի հետ, ուստի ես շնորհաւորելով հեղինակին՝ հակիրճ կը լինեմ խօսքիս մէջ՝ վարձքներդ ի կատար պարոն Ահարոնեան, - իր հակիրճ խօսքը այսպէս եզրափակեց պարոն դեսպանը:

Գեղեցիկ օրւայ մեղաւորին՝ պարոն Ահարոնեանին էր նւիրած եւ առաջին անգամ ցուցադրուող «Դամաւանդից մինչ Արարատ» ֆիլմը, ուր անսքող ներկայացւած էր բարերարի ունեցած հիմնաքարային ներդրումը հայ-իրանական կայուն յարաբերութիւնների ստեղծման ու հաստատման համար, որը սկիզբ էր առնելու Արաքսի ափին կառուցուող շարժական կամրջով, որի մանրամասներն ի դէպ կան «Փոթորկոտ կեանքիս օրերը» գրքում: Բարերարի կատարած անգնահատելիօրէն մեծ ու շնորհակալ աշխատանքի վկան եղան ներկաները ֆիլմի դիտման ընթացքում, ուր ներկայացւած էր նրա կողմից Իրանում կառուցւած հայկական մանկապարտէզը, Երեւանի Քանաքեռ Ձէյթուն համայնքի այրւած 136 դպրոցի անցեալն ու ներկան նրա տնօրինուհու խօսքով, ինչպէս նա-

եւ ՀՀ Բնութեան պահպանութեան թանգարանի այսօրը, որոնց վերակառուցման մէջ հսկայական ներդրում է ունեցել Լեւոն Ահարոնեանը: Ահարոնեան ընտանիքի կողմից Իրանում եւ Հայաստանում կատարած բարեգործութիւններն ու բարենորոգչական աշխատանքները, գործարար ներդրումներն ու մշակութային, դիւանագիտական, առեւտրատնտեսական եւ գործարար կապերի մասին խօսող ֆիլմը, որն ընդունւեց ներկաների հիացմունքով եւ բուռն ծափերով:

«Գրական» թերթի խմբագիր Սամել Կոսեանը շնորհաւորելով հեղինակին՝ իր եւ Գրողների միութեան նախագահ Լեւոն Անանեանի

քի արտայայտման մէջ ապագայի պատմաբանների թողնելով միութիւններին ու ողջունելով հեղինակին իր տքնաջան աշխատանքի համար գերաշնորհ Սրբազանը անդրադարձաւ քրիստոնէական հոգեւոր դաստիարակութեան կարեւորութեանը հայ տեսակի մէջ, որի շնորհիւ այսօր ունենք Ահարոնեանի նման անձ, բարերար ու ազգային գործիչ:

- ...Լեւոն Ահարոնեանը իր դաստիարակութիւնը իր տնից ստացել էր, շաղախւած քրիստոնէական դաստիարակութեամբ եւ դրա համար հայրենասիրական իր ապրումները զօրեղ էին, ուժեղ էին, դրա համար, այն ինչ որ իբրեւ բա-



անունից ընթերցեց վերջինիս գնահատականի խօսքը երկհատոր յուշագրութեան մասին եւ Լեւոն Ահարոնեանին յանձնեց ՀՀ Գրողների միութեան կողմից սահմանւած «Գրական Բարերար» դիպլոմը հայ գրքի տպագրութեան մէջ ունեցած մեծ ու անուրանալի աւանդի համար: Գինեծօնի արարողակարգը կատարւեց Իրանի հայոց թեմի առաջնորդ Սեպուհ Արքեպիսկոպոս Սարգսեանի ձեռամբ՝ գինով օծւեցին գրքի անդրանիկ էջերը եւ շնորհաւորանքի հոգեւոր խորհուրդը փոխանցելով մեսրոպատառ եւս մի ծննդի, որ է «Փոթորկոտ կեանքիս օրերը» երկհատորեակը: Այնուհետեւ իր ելոյթում գրքի բնոյթին ու որոշ մանրամասնութիւններին նւիրւած իր կարծի-

րերարութիւն արեց իր ճակտի քրտինքով վաստկած գումարից, զանձից՝ նա իր էութիւնը խառնեց դրա մէջ: Խօսւեց 136 դպրոցի վերակառուցման մասին, այդ աշխատանքներուն ոչ միայն դրամ դրեց, ինքը նաեւ իր ճակտի քրտինքը խառնեց, ես իր հետ եղել եմ, այդ դպրոցի աշխատանքներին, բացումից քանի մը օր առաջ, երբ հեւքոտ աշխատում էր, որ հասացնէր Սեպտեմբերի մէկին... Եւ ոչ միայն այս, երբ «Ահարոնեան» մանկապարտէզի բացումը պիտի կատարւէր Ձէյթուն քաղաքամասում այնպէս պատահեց, որ այդ օրերին երանաշնորհ Գարեգին երկրորդ

ՇԱՐ. ԷՅ 16

ԳԵՂԱՆԿԱՐՆԵՐ ԵՆ ԱՆՇԵՏԱՆՈՒՄ ՆԱԵՒ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Որքան ուսումնասիրում ենք մշակոյթի ոլորտը, այնքան սարսափելի փաստեր ենք բացայայտում: Յովհաննէս Շարամբէեանի անան ժողովրդական արւեստի (այստեղ պահպանուում եւ ցուցադրուում են հայկական դէկորատիւ-կիրառական արւեստի մմուշներ եւ գեղանկարչական աշխատանքներ), Սարգարապատի թանգարաններից անհետացել են արծաթեայ իրեր, հին գորգեր: Եւ զարմանալի է, որ իրաւապահները առաջօր ոչինչ չեն կարողացել բացայայտել, աւելին, շատ դէպքերում պարզապէս քրէական գործեր չեն յարուցել: 2009 թ. 3րագրանի պատկերասրահից գողացւել է 18 գեղանկար: Իսկ հայ իրաւապահները անզօր են այս յանցագործութիւնը բացայայտել, քրէական գործը «մահացել է»:

Հայաստանի թանգարաններում ամենատարածւածը բնօրինակ աշխատանքները կրկնօրինակներով փոխարինելն է: Իսկ բնօրինակները, բնականաբար, վաճառուում են կամ յայտնուում որեւէ պաշտօնեայի տանը: Այդպիսի իրավիճակ է գրեթէ բոլոր թանգարաններում: Այս պատճառով մի շարք հիմնարկներում տնօրէնի կամ աւանդապահների փոփոխութեան ժամանակ նոյնիսկ չի յաջողւում ընդունում-



«Արհաւիրք», Վլադիմիր Մարգարեան (120 x 90) 1989

յանձնում կատարել:

«Ցուցահանդէսային կենտրոն» ՊՈԱԿ-ից կորել եւ փոխւել են բազմաթիւ գեղանկարներ, արծաթէ իրեր: Միմաս Աւետիսեանի որդու՝ Արմանի խօսքով, այդ կենտրոնում գտնուող Միմասի 9 նկարներից 8-ն անհետացել է, իսկ մէկը կախւած է փոխնախարար Արեւ Սամուէլեանի աշխատասենեակի պատին: Արմանն ասում է, որ այս փաստի առթիւ քրէական գործ չի յարուցել:

«96-98 թթ. պարզեցինք, որ չկան, այն ժամանակայ փոխնա-

խարար Կարէն Արիստակէսեանի օգնութեամբ: Այդպէս էլ ոչ մի տրամաբանական պատասխան չստացանք: Ես համոզւած եմ, որ այդ նկարները Հայաստանում չեն», - ասում է Արման Աւետիսեանը:

Անհետացած բազմաթիւ ցուցանմուշներից են Վոլոդեա Մարգարեանի (Վալմար) «Արհաւիրք», Թադէոս Գեւորգեանի «Մ. Նալբանդեան», Խաչատուր Իսկանդարեանի «Վ.Ի.Լենին», Գրիգոր Ազիզեանի «Կարբիտագործներ», Խաչատուր Եսայեանի «Առեւտրի

«Աղքատ հովիւր», Վլադիմիր Մարգարեան (60 x 50):

Լաչինից բերւած կտաւը: Կտաւի վրայ գրւած է «Հովիւր», վրայից աւելացւած է «Աղքատ» բառը, արդիւնքում ստացւել է «Աղքատ հովիւր», չափսերը՝ 60 x 50:

Իսկ պիտակի վրայ ռուսերէնով գրւած է «Աղքատ», չափսերը՝ 130 x 90



շարք», Բարդուխ Վարդանեանի «Ձմեռը Ջանգուլի կիրճում» ստեղծագործութիւնները, իսկ Միեր Աբեղեանի «Բիւրականում» նկարը եւ Էդուարդ Իսաբէկեանի «Աշտարակի քրաղացի մօտ» նկարը փոխաւած են: Ցանկը կարելի է անվերջ շարունակել: Այստեղ նշւած հեղինակները խոշոր արւեստագէտներ են եւ մեծ ճանաչում ունեն թէ Հայաստանում, թէ արտասահմանում:

Վալմարի «Արիաւիրք» նկարը փոխարինւել է հեղինակի «Յովիւ» նկարով (մանրամասն տես նկարներում):

14 Յունիսի, 2012

ԳԼԽԱՒՈՐ ԴԱՏԱԽԱՁՈՒԹԻՒՆՆ ԱՐՉԱՎԱՔԵԼ Է

Յունիսի 14-ին «Պետական թանգարաններից, մշակոյթի նախարարութիւնից գեղանկարներ են անհետանում, եւ ոչ ոք չի պատժուում» յօդւածով «Յետք»-ն ահազանգել էր, որ մշակոյթի նախարարութեան ենթակայութեան տակ գտնուող թանգարաններից անհետանում են նկարներ, քանդակներ, հին գորգեր ու զարդեր, բայց որեւէ մէկն այդպէս էլ չի պատժուում: Արդէն այսօր հրապարակւեց «Յետք»-ի հաղորդումը յանցագործութեան մասին, եւ ներկայացւեց պետական ունեցւածքի թալանի եւս երկու փաստ:

Ի պատասխան՝ գլխաւոր դատախազի մամուլի քարտուղար Սոնա Տնուգեանը «Յետք»-ի ներկայացրած հաղորդման մեկնաբանութիւնների դաշտում քիչ առաջ գրել է. «Տեղեկացնում են, որ թէ նշւած հրապարակումը եւ թէ նախորդը՝ թողարկւած 14.06.12 թ., ՀՀ գլխաւոր դատախազի ցուցումով ուղարկւել է օրէնքով սահմանւած կարգով ընթացք տալու»:

Աղբիւր՝ www.hetq.am

1993 Թ. ՅՈՒՆԻՍԻ 12-ԻՆ ՉՈՂԻՆՅՈՒՆԻ ՄՈՆԹԵՍԵԼՆԵԱՆԸ

Էդիկ Բաղդասարեան



Վաղ առաւօտեան Լեռնային Ղարաբաղի Մարտունու ինքնապաշտպանական ուժերը սկսեցին Ադրբեջանի Աղդամի շրջանի մի քանի գիւղերում տեղակայւած ռազմական յենակետերի ոչնչացման գործողութիւնը:

Ամէն ինչ յաջող էր ընթանում: Կէսօրին գործողութիւնն աւարտւած էր: Մոնթեն, Կոմիտասը, Սարիբէկը, Սարօն, Հովիկը եւ Գեւորգը «Վիլիս»-ով մտան Մարգիլի գիւղ: Տարածքը գննելուց յետոյ նրանք պէտք է որոշէին նոր դիրքերի տեղերը:

Խաչմերուկում գրահամեքենայ նկատելով՝ «Վիլիս»-ը կանգնեց: Մօտ 40 մետր հեռաւորութեան վրայ գտնուող գրահամեքենայի շուրջ խմբւած էին զինուորներ: Կոմիտասը, որ ադրբեջանական զինուորական համազգեստով էր, դուրս եկաւ մեքենայից, քայլեց նրանց ուղղութեամբ: Նա գոռաց՝ հայե՞ր էք:

Դիմացիմները ադրբեջաներէնով պատասխանեցին՝ ոչ: Կոմիտասը յետոյ պատմում էր. հարցնելու պահին արդէն գիտէր, որ թշնամու զինուորներն են: Նա կրակելով ետ քաշեց: Մեքենայում գտն-

ւողները դուրս նետուեցին եւ կրակելով սկսեցին դիրքաւորուել: Թշնամու աւտոմատաւորներին միացաւ գրահամեքենայի խոշոր տրամաչափի գնդացիորդ:

Առաջին կրակոցի ժամանակ տղաները պառկած էին: Մոնթեն վազեց դէպի կողքի տան պատը: Լսւեց գնդացիի երկրորդ կրակոցը: Կպել էր պատին... Բեկորի մի մեծ կտոր մխրճւել էր Մոնթէի գլխի մէջ: Տղաներից չորսն արդէն վիրաւոր էին: Հովիկը Մոնթէին գրկած՝ ռացիայով օգնութիւն կանչեց. 00-ն չկայ, 00-ին խփել են... Հրամանատարի կողքին դիրքաւորուելով՝ նրանք շարունակեցին դիմադրել: Օգնութեան հասած ուժերը ադրբեջանական ջոկատին ոչնչացրին, ադրբեջանցի զինուորներից մէկին գերի վերցրին: Հետախուզութեան պետը՝ Սարիբէկ Մարտիրոսեանն արդէն արիւնաքամ էր եւ հիւանդանոց հասցնելուն պէս մահացաւ:

Աղբիւր՝ www.hetq.am

«ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ» ԳՐՔԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

ԻՐԱՆԱՀԱՅՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՍՈՌԱՅԻԱՏ ԷԶԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Ռոբերթ Սաֆարեան

Հրաշալի պատմական աշխատություն է Յարութին Թ. Տէր Յովհաննեսի Նոր Ջուղայի Պատմությունը:

Ընդհանրապես ասում է, որ Շահ Աբբասը Հայերին բերեց Իրան եւ նրանց կալածներ եւ հնարաւորութիւններ ընծայեց եւ հովանաւորեց, ինչի արդիւնքում բարգաւաճեց եւ հարստացաւ Նոր Ջուղան, հիմնականում իր վաճառականների հարստանալու արդիւնքում: Ասում է նաեւ, որ Շահ Աբբասի միջոցով հայերի գաղթը Իրան բռնագաղթ էր, որի ընթացքում գոհեցին հազարաւոր մարդ: Յարութին Յովհաննէանը պատմում է իրականութեան երկու կողմի մասին էլ: Թէ՛ նկարագրում է բռնագաղթը, թէ՛ հայերի հաստատումն ու բազաւաճումը Նոր Ջուղայում: Նա բացատրում է Շահ Աբբասի հակասական եւ երկկողմանի, բարիացական եւ միաժամանակ բռնապետական, վերաբերմունքի պատճառները:

Սաֆաւեան թագաւորութեան վերջին արքայ՝ Շահ Սուլթան Հուսէյնի օրերից սկսում է Նոր Ջուղայի անկումը. վաճառականները եւ արհեստաւորները սկսում են թողնել Ջուղան եւ գաղթել Բուշեհր, Բասրա եւ այլ համեմատաբար ապահով քաղաքներ: Նրանց բնակարանները մնում է թափուր եւ քաղաքն սկսում է աւերել, բնակչութիւնը պակսել: Գաղթողները չէին կարողանում վաճառել իրենց տները կամ ծախել տան կահկարասին: Ահա այս մասին հետեւեալն է գրում «Պատմութիւն Նոր Ջուղայի» հեղինակը. «...չորեքպատիկ վարձով ջորեպաններ վարձելով, գիշերւայ մէջ ելնելով՝ հեռանում էին Ջուղայից, իրենց ճամբորդութիւնը կատարում էին զոյգ իջեւաններով եւ փութարշաւ, որ չլինի թէ փնտրողները հետապնդեն նրանց, բռնեն եւ վերադարձնեն Ջուղա: Իրենց տներից մեկնելու ժամանակ փակում էին դուռը եւ բանալին ձգում էին տանիքները, բոլոր կարասիները լքե-

լով դրանց մէջ եւ իրենց հետ վերցնելով միայն թեթեւակշիռ եւ թանկարժէք ստացւածքներ»:

Ջուղայի դէմ հալածանքն ու ճնշումները Նադեր Շահի օրօք հասնում են իրենց գագաթնակէտին, սակայն Քեարիմ Խանի ժամանակներում քիչ թէ շատ մեղմանում են: Շահ Աբբասի օրօք հայերի բռնագաղթի եւ Իրանի սահմանադրական յեղափոխութեանը հայերի մասնակցութեան միջեւ ընկած համարեա երկու դարերի մասին քիչ բան գիտենք եւ այս գիրքը այդ առումով վստահելի աղբիւր է համարւում:

Կրօնափոխութեան սպառնալիքը զգալի է եղել բոլոր շրջաններում: Դա, երեւի, բնական է եղել մուսուլման երկրում ապրող քրիստոնէայ բոլոր համայնքների համար: Սակայն սկսած Շահ Աբբասի ժամանակից, դա չի եղել ընդհանուր քաղաքականութիւն: Յամենայն դէպս, «Պատմութիւն Նոր Ջուղայի» գրքում բազմիցս խօսւում է «ուրացողներ»-ի մասին եւ ասում է, որ նրանց կողմից աւելի մեծ բռնութիւններ են գործադրել Ջուղայի հասարակ հայ բնակչութեան նկատմամբ: Ապակեգործների դէպքը (գլուխ 57) եւ Լոյս Գրիգորի մահատակութիւնը (գլուխ 29), սիմուլիկ պատումներ են, որոնք վկայում են կրօնափոխութեան վտանգի միշտ ներկայ սպառնալիքի մասին մասին:

Իսկ երբ օտար, քրիստոնէայ պետութիւնների հետ պատերազմ էր լինում, հայերը, որպէս քրիստոնէաներ, կասկածի էին ենթարկւում, որ հաւանական է օգնեն թշնամուն եւ ստիպած էին խիստ պնդումներով, մասնակագրութիւններով եւ այլ միջոցներով ապացուցել, որ այդպէս չէ: Այս մասին լաւ օրինակ է




«ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ» ԳՐՔԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ ՄԵՎ ՀԱՅԵԱՑՔՈՎ

Աշխատասիրեց Յարութին Թ. Տեր Յովհաննեանը (1828-1871)

1880 առաջին հրատարակություն

1976 Աշխարհարարի քարգմանության առաջին հրատարակություն. քարգմանիչ՝ Պողոս Քինյ. Պետրոսեան. Նախաբանը՝ Ա. Ամուրեանի

2000 Պարսկերէն քարգմանության հրատարակություն. քարգմանիչներ՝ Լ. Մինասեան, Մոհամմադալի Մուսաի Ֆարիդանի. հրատարակչություն՝ «Զենդէռուր»



2008 Սրբազրած հրատարակություն. Բարգէն Եպս. Չարեանի նախաբանի համաձայն. «... ենթարկել է որոշ լեզական և քարգմանական սրբագրությունների ու պատշաճեցումների». Խմբագրութեամբ՝ Թովմա Սրկ. Գալստանեանի. Նոր Զուղա.

1856-ին տեղի ունեցած Իրանի եւ անգլիացիների միջեւ կռիւը (գլուխ 66):

Տէր Յարութիւն Յովհաննէանը իր գիրքը շարադրելիս, հետաքրքրւած է միայն իրականութիւնները արձանագրելով, եւ շատ լուրջ հետեւում է պատմագրութեան այս սկզբունքին: Նա հոգեւորական է, բայց այս գրքում հրապարակ չի գալիս որպէս քրիստոնէայ քարոզիչ, այլ որպէս անաչառ պատմաբան: Այս գրքում չկայ մերօրեայ իմաստով ազգային գաղափարախօսութիւն՝ անկախ հայրենիքի ստեղծում կամ վերադարձ հայաստան: Մեր օրերի պէս, եթէ գնում

էին Ջուղայից, գնում էին աւելի հեռու: Չկայ բռնութիւնների դէմ պայքարելու միտում, կայ միայն գլուխը պահելու, գոյատեւելու հարց եւ ժողովրդի օրաւոր աղքատացում:

Իհարկէ չնոռանանք, որ խօսքը ֆեոդալական միապետական բռնակալութեան մասին է, ուր կամայականութիւնները եւ առօրեայ հալածանքը, կեղեքումները եւ հարկահաւաքները օրէնք էին եւ դրանց էր ենթարկւած երկրի ողջ բնակչութիւնը, ոչ միայն հայերը: Միայն թէ հայերի համար կրօնական տարբերութիւնը մի աստիճան եւս ծանրացնում էր նրանց վիճակը:



Պատկերներ այսօրայ Նոր Ջուղայից: Ինչպէս Տէր Յովհաննէանի գրքում նկարագրւած զանազան շրջաններում, այսօր եւս արտագաղթը աներաժութիւն է պատճառում Իրանի ամենակարեւոր հայկական բնակավայրին: Պատկերների խորքում լքւած տների փլման սեմին գտնող պատերը, փակ դռներն ու դատարկ պատուհանները դրա մասին են վկայում:



ՅԱՐՈՒՔԻՆ ՏԵՐ ՅՈՎՀԱՆՆԵԱՆԻ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Նոր Ջուղայի պատմության բազմավաստակ հեղինակ հանգուցեալ պարոն Յարութին Թ. Տեր Յովհաննեանցը Տեր Յովհաննեանց ազգատոհմից էր, նրա հայրն է հանգուցեալ պրն. Թադէոս Յարութինեանը, որի մասին ինքն իսկ հակիրճ յիշատակութիւն է անուան այս պատմության առաջին հատորի 24-րդ գլխի 9-րդ յօդուածում:

Յարութին Թ. Տեր Յովհաննեանցը ծնել է Պարսկաստանի Սպահան քաղաքի Նոր Ջուղայում, Փրկչական 1828 թի Փետրուարի 14-ին: Հազիւ 8 տարեկան էր, երբ նրա հայրը Պրն. Թադէոսը, 1836 թին, նրան իր հետ վերցնելով՝ տանում է Հնդկաստանի Կալկաթա քաղաքը եւ որոշ ժամանակով աշակերտութեան է տալիս տեղի Հայոց Մարդասիրական ճեմարանում, որտեղ հռչակաւոր ուսուցիչ Պրն. Յովհաննէ Արզալեանցի դաստիարակութեամբ՝ նա սովորում է ընթերցանութեան եւ մասնաւոր ուսուցումների սկզբունքները: 1839 թին, իր հօր հետ կրկին վերադառնում է Ջուղա եւ մտնելով տեղի «Սամեան Ամենափրկչեան» կոչուած դպրոցը, որ ժամանակին հաստատուած էր մադրասաբնակ բարեյիշատակ հանգուցեալ Պրն. Գրիգոր Սամեանցի օժանդակութեամբ, կրթեց այդ ուսումնարանի վարժապետ յարգոյապատիւ Պրն. Յովհաննէ Ա. Ջօհրապեանցի խնամատարութեամբ, որը հմուտ էր Ս. Գրքի, քերականութեան, թարգմանութեան, հաշիւապահութեան, գեղագրութեան, բարոյական իմաստասիրութեան եւ այլ բնագաւառներում, որոնք այդ ժամանակ դպրոցի ուսման առարկաներն էին, որոնց մասին ինքն եւս յիշատակում է այս պատմության երկրորդ հատորում: Որովհետեւ ինքը եւ աշխոյժ պատանի էր, իր ջանասիրութեամբ եւ մեծ ուշադրութեամբ լաւագոյն կերպով իւրացրեց ուսուցմունքների սերմերը եւ պտղաբերեց արդիւնաւէտ արգասիքով, որի մասին գիտնական Մեսրոպ Դ. Թադիադիանցը Կալկաթայի «Ազգասէր Արարատեան» լրագրի 1850 թի Յունուարի 15-ի թիւ 64-ի 506-րդ էջում դպրոցի ուսումնասէր աշակերտների գովասանքով է յիշատակում եւ ասում. «Որոնք հետզհետէ Նոր Ջուղայ բերեցին նախկինի փառքի համբաւին արժանի հայրենական գրագիտութեան պտուղները»:

Արդէն նրա գրածքների նորաբողբոջ արդիւնքները, արձակ եւ չափածոյ բանահիւսութիւններով, սկսել են փայլել յիշեալ լրագրի էջերում, որոնք յայտնի են ընթերցողներին:

Գովելի էր նա՝ պատանի հասակում իր պարկեշտ եւ առաքինի համեստութեան համար, որով սիրելի էր բոլորին եւ տիպար բարոյականութեան բարի օրինակ էր իր ընկերներին: Այդ տարիքում ծնողներից որբանալով՝ իր վրայ է ծանրանում տան կառավարման

առօրեայ հոգսերը եւ այլեւս չկարողանալով երկար ժամանակ յաճախել ուսումնարան, հակառակ իր իղծով լի եռանդին, ստիպեց դուրս գալ այնտեղից, այնուհետեւ զբաղելով մասնաւոր առեւտուրով:

1851 թին, Տեր Թադէոս Արքեպիսկոպոս Բեզնագարեանի Ս. Ամենափրկիչ Վանքի առաջնորդութեան առաջին տարում, նրան յանձնեց Վանքի ատենադպրութեան պաշտօնը: Այս գործի մէջ իր քաջ հաւատարմութեամբ եւ գովելի պաշտօնավարութեամբ սիրելի եղաւ Առաջնորդին, որը շատ անգամներ ժողովրդի խնամքի եւ վանական գործերի կառավարութեան համար խորհրդակցում էր նրա հետ:

Նա խիստ նախանձնախնդիր էր իր հայրենիք Ջուղայի եւ Ս. Վանքի բարի համբաւի նկատմամբ, եւ ամբողջ հոգով ջանանում էր ծանուցել այդ, եւ եթէ որեւէ իրողութեան մէջ մի սխալութիւն էր նկատում՝ վշտանում եւ խիստ տխրում էր: Նրա այս զգացմունքները յայտնի կը լինեն ընթերցողներին՝ այս պատմության մէջ գրի առած բոլոր դէպքերից: 1855 թի Փետրուարի 27-ին նա ամուսնացաւ հանգուցեալ Աւետիք Թ. Կրտեանի դստեր՝ Վարդուհու հետ եւ ունեցաւ հինգ աղջիկ եւ երկու տղայ զաւակներ: Յուսալի է նրանց մէջ տեսնել իրենց ծնողների քաղցրաբարոյութիւնն ու ջերմ հայրենասիրութիւնը:

Յարութին Թ. Տեր Յովհաննեանցի աշխատասիրութիւնը յայտնի է, որովհետեւ անխոնջ վաստակով կատարած Վանքի ատենադպրութեան ծանր պաշտօնից, սրտնեռանդ բաղձանքով ժամանակ առ ժամանակ շարադրած հեղինակութիւնների եւ բանասիրական գրածքների աշխատանքներից բացի, որոնց մասին ներքեւում անդրադարձ կայ, մնացած ազատ ժամանակներում ինքը թոյլ չէր տալիս անգործութեամբ մնալ, այլ իր առօրեայ պէտքերը հոգալու համար զբաղում էր մասնաւոր առեւտրական գործով թէ՛ Ջուղայում եւ թէ՛ զանազան վաճառելիքներ ուղարկելով հեռաւոր քաղաքներ, որոնց փոխարէն բաւականաչափ շահ ապահովեց եւ կարողացաւ որոշ դրամազուլիս կազմել՝ իր եւ իր մահից յետոյ ընտանիքի ապրուստի համար:

1871 թի Մայիսի 14-ի գիշերը, մօտ արշալոյսին, ի տխրութիւն եւ վիշտ բոլոր բարեկամների եւ հայրենակիցների, անկողնում հարբուխից յանկարծամահ կաթածահար լինելով՝ 43 տարեկան հասակում զրկեց կեանքից եւ յաջորդ օրը հանդիսաւոր յուղարկաւորութիւնից յետոյ, ամփոփեց հանգստեան գերեզմանում՝ Ջուղայի ազգային հանգստարանում, իր ընտանիքի ննջեցեալների մօտ:

ԳՐԷԻ ԵՄԽԱԲԱՆԻՑ ԻՆՉՈՒ ԳՐԵՅԻ ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Յարութին Տեր. Յովհաննան

Ա) Նոր Ջուղայի մեծաշուք փառքի նախկին համբաւը, նրա մեծահամբաւ բնակիչների ունեւորութեամբ եւ երեւելի վաճառականների արժանայիշատակ մեծագործութեամբ հռչակած, եւ ներկայի յեղաշրջւած վիճակը՝ աւերակների եւ ամայութեան ցաւալի տեսքը, գրգռեցին իմ սրտի հետախոյզ փափագը՝ լաւ հասկանալու դրա պատահարները: Այդ մասին պատմագրական գիրք չգտայ՝ փափագիս գոհացում տալու համար եւ ո՛չ էլ մարեց այն զգացումը, որ արթնացել էր մէջս: Հաճելի էր ինձ խօսակից լինել ծերունիների հետ եւ հարցաքննել անցեալի խնդիրների մասին, որոնցից ո՛չ մէկ օրինակի մասին որեւէ բան չէի լսել դէպքերի պատմութեան մէջ, որով աւելի յաճախակի էր դառնում ներութիւնն ու գրգռածութիւնը:

Բ) Ինձ հաւանական է թուում, որ Առաքեալ Վարդապետից յետոյ, Ջուղայի հայրենակիցներից ոչ մէկն ուշադրութիւն չդարձրեց իւրաքանչիւր մի ժամանակում արձանագրելու պատահած լաւ եւ վատ դէպքերը, որի պատճառը տեղեկանում են Ս.Ամենափրկիչ Վանքի հոգաբարձուներ՝ Յակոբ եւ Պօղոս Վարդապետների կոնդակներից, գրւած ազարիայի 132 (1746) թւին. «...Երկրորդ շինութեանը (Ջուղայի) ժողովրդի կրած անտանելի նեղութեան եւ անպատմելի չարչարանքների վշտի մասին ձեզ պատմելու է նւիրակը, որոնք չէր կարելի գրի առնել՝ ահի եւ երկիւղի պատճառով»:

Հայր Միքայէլ Չամչեանը, 1787 թւի Յունւարի 15-ին մի նամակ է գրում գիտնական պարոն Յարութին Սահակեան Աղանուրեանցին՝ նրանից խնդրելով ուղարկել պարսից թագաւորների անունները՝

նրանց գահակալութիւնների ժամանակագրական ծանօթութիւններով, որից յետոյ աւելացնում է ասելով. «Լսել էի թէ Առաքել պատմագրից յետոյ, Յակոբ անունով մի քահանայ եւ մի ուրիշ քահանայ՝ Աւետիք անունով, Ջուղա գալով, գրել են Ջուղայի դէպքերը: Եթէ իրապէս կան այդպիսի գրւածքներ՝ տւէք օրինակելու»: Եթէ իրապէս եղել են այդ երկու պատմիչները, որոնց մասին յիշատակում է Հայր Միքայէլը, բոլորովին անծանօթ չէին մնալու նրանց գործերը, եւ Հայր Միքայէլը, եթէ ստացած լինէր նրանց գրութեան օրինակը, իր պատմագրութեան մէջ Ջուղայի պատմութիւնից, աւելի ճոխութեամբ կը գրէր:

Կարգից դուրս չեն համարում յայտնելու, որ Ջուղայեցի Ստեփանոս Եպիսկոպոսի առաջնորդութեան ժամանակ, 1688 թւին, Յիսուսեան կարգից մէկը՝ Յակոբ Վարդապետ անունով, եղել է Ջուղայում, որը կաթոլիկների դէմ լուսաւորչական հայերի ունեցած խռովութեան պատճառով իր միւս պաշտօնակիցների հետ հալածելով՝ պարսից շահ Սուլէյման արքայի հրամանով վտարեց Ջուղայից: Նա մի փոքրիկ գրքոյկ էր գրել՝ նպատակ ունենալով Ստեփանոս Առաջնորդի անվայել գործերը յայտնելու, սակայն իր թշնամական ոճը փոխարէն Առաջնորդի գործերի անվայելչութիւնը ցոյց տալու, իր խռովայոյզ չարութեամբ գրգռած՝ եղբայրատեսաց բնաւորութեան նկարագիրն է ներկայացնում:

Նա իր բանակուի ընթացքում համառօտ կերպով է անցնում իր ժամանակի Ջուղայի որոշ խնդիրների պատահարներից, որ նշանակելու ենք իրենց պատշաճ տեղերում:

ԶՈՒՂԱՅԻ ԲԱԾ

Ա) Թէեւ պատմութեանս մէջ գրեցին Ջուղային պատահած դժբախտութիւններն ու հարստահարութիւնները, եւ տեղեկացւեցին դրանց սկիզբ առնելու պատճառները, սակայն յարմար համարեցի այս գլխում աւելի ամփոփ եւ բացայայտ նշանակել եւ պարփակել բեկումնի պատճառները: Յոյսով են, որ ոչ պախարակի այս պարզաբանութիւնը՝ իբրեւ պատմութեան կրկնաբանութիւն, այլ ար-

Նոր Ջուղան
Տեր. Յովհաննանի օրօք
(19-րդ դարի երկրորդ կեսին).
այս եւ յաջորդ էջերի
լուսանկարները՝
Էռնեստ Հոլցեր



ԺԱՆՍԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐՆ ՈՒ ԱԷՐԱԾՈՒԹԻՒՆԸ (ԳՆՈՒԽ 52)

ժամի կը լինի ուշադրութեան թէ՛ որքան գովեստի արժանի են ջուղայեցիք, որոնք անչափ անտանելի հարստահարութիւնների աղէտներ կրեցին եւ տակաւին Պարսկաստանում անաղօտ եւ պայծառ պահեցին քրիստոնէական հաւատը:

Ջուղայի քանդումի պատճառներն եղել են կրկնակ տեսակի՝ ընդհանուր եւ մասնաւոր: Ընդհանուրները հրամայած էին թագաւորից եւ օրէնքներից՝ ա) Չափազանց հարկապահանջութիւն, բ) Կեղեքում, գ) Յափշտակութիւն, դ) Տուգանք, ե) Վաւաշտ բռնակալութիւն, զ) Յաւատուրացութիւն եւ ուրացողների ժառանգական իրաւասութեան օրէնքը: Մասնաւորներն էին՝ ա) Արքունի ծառանե-

րի հարստահարութիւնները, բ) Ազգային մատնութիւնը, գ) Անիրաւ վարձ եւ փոխ առած դրամի տոկոսը, դ) Բնակիչների յուսալքումը: Սրանց մասին պիտի սկսեմ անջատաբար խօսել:

Ընդհանուր Պատճառները

Բ) ա.- Հարկապահանջութեան չափազանցութեան սկիզբը աֆղաններից եղաւ եւ տեւեց մինչեւ Քարիմ խանի թագաւորութեան ժամանակ: Նադէր շահը՝ բռնակալների մէջ անյազեցողը եւ մարդկանց մէջ անկարեկիցը, ինչպէս բոլոր բռնակալութիւնների, այս մարզում եւս բոլորի չափն անցաւ:

Նադէր շահի սպանութիւնից յետոյ, կառավարական նախարար-

ների արշաւանքը կամ աւելի լաւ է ասել՝ իշխանների աւազակութիւնը՝ պարսից թագաւորական թագը կորզելու, ծանրացրեցին հարկի չափը, որովհետեւ մէկ տարւայ ընթացքում չորս թագաւորներ փոխւեցին եւ չորսն էլ հարկ ստացան ջուղայեցիներից, առանց որեւէ ժամանակ շնորհելու, վախենալով ապագայից, որ իրենց աւելի հզորագոյնից պարտւելով՝ որսը կը խլի իրենց ձեռքից:

բ.- Ինչպէս հարկապահանջութիւնը, նոյնպէս եւ կեղեքումի սկիզբն եղան աֆղանները, որ սաստկացաւ Նադէր շահի թագաւորութեան ժամանակ, եւ շարունակեց մինչեւ Քարիմ խանի թագաւորելը՝ 36 տարի: Կեղեքման հրամանը թագաւորից էր՝ ստանալ այսչափ գումար: Սրանից բացի մի ինչ որ յանցանք հիմք դնելով՝ իրաւարարներն եւս հրաման էին արձակում. այդպիսի հրաման լինում էր կամ Ջուղայի բոլոր հասարակութեան վրայ եւ կամ անհատ-անձնաւորութիւնների նկատմամբ:

գ.- Ամսից-ամիս թագաւորների փոփոխումը, սկսած Նադէր շահի վախճանումից մինչեւ Քարիմ խանի թագաւորելը՝ 10 տարի, յաղթական զօրականները, Ջուղայի վրայ յարձակւելով ինչպէս անպաշտպան տան վրայ, տնից-տուն էին մտնում, աւարի էին առնում ինչ որ պատրաստ էին գտնում, բնակիչներին նեղացնելով՝ աւելին էին պահանջում եւ ինչքան կարողանում՝ ստանում եւ հեռանում էին:

դ.- Տուգանքը կատարում էր առանձին անձնաւորութիւնների վրայ՝ ծագում առնելով քծնող մատնիչների գրպարտութիւնից: Այս երեւոյթը սաստկացաւ այն տարիներում, մինչ ջուղայեցիք յուսալքւած լքում էին իրենց տները եւ շտապում էին օտար սահ-



մաններ գնալ, որոնց ազգայիններ մատուցեանք չարախօսում էին իշխանների եւ քաղաքապետի առաջ, որոնց բռնելով՝ մեծ տուգանք էին դնում նրանց վրայ, որպէսզի պարտաւորւեն բոլոր իրենց ունեցածքը սպառել եւ կարողութեան նւազունով չկարողանան իրենց ընտանիքին այդտեղից հեռացնել:


ե.- Վաւաշոտ բռնակալութիւնը Ջուղայից կոյս աղջիկներ եւ դեռափոթ պատանիներ պահանջելն էր: Այդ բռնակալութիւնը բոլորից աւելի տաղտկալի, յոյժ ծանր էր ջուղայեցիների համար, այդ պատճառով կանուխ ամուսնութիւններ էին լինում, նախքան չափահասութեան տարիքը, որպէսզի աղջիկները կանացի տարագ ունենալով՝ անիրաւների բռնակալութեանը չմատուէին: Երբ հրաման էր լինում տղաներ ու աղջիկներ ձեռք բերել, իւրաքանչիւր ծնող աշխատում էր այդ ամօթից ազատել իր զաւակներին, որի համար շատերը կաշառում էին փնտրող ներքինիներին եւ ոմանք էլ նրանց թագցնում էին թաքս-

տոցներում եւ տան խորշերում, որպէսզի չընկնեն փնտրողների ձեռքը:

Այս պատմութեան մէջ, Ալնաղի խանը պարսաւանքի արժանի անուն ստացաւ՝ կուսանաց մեծաստանից երկու աղջիկներ տանելու համար, որոնք այդտեղ էին մտել՝ կոյս դառնալու համար, բայց տակաւին կրօնական կարգ չէին ընդունել:

զ.- Ջուղային ծանր եւ մեծ վնաս հասաւ ուրացողներից: Այս դժբախտութիւնը սկիզբ առաւ շահ Աբբաս երկրորդի ժամանակից, սաստկացաւ շահ Սուլթան Զոսէյնի թագաւորութեան ժամանակ եւ տեւական մնաց մինչեւ մեր ժամանակները: Կրօնապետերը պաշտպան լինելով այն օրէնքների՝ որ պատկիրում են թէ՛ վախճանած քրիստոնեաների ինչքն ու ստացածքը նրա ուրացած ազգականի ժառանգութիւնն է, այդ ժառանգութեան իրաւասութիւնն ըստ ոմանց մինչեւ չորս սերունդ եւ ըստ ոմանց էլ մինչեւ 7 սերունդ ներգործութիւն ունի ուրացող ընտանիքում: Քաղաքական կառա-

վարութիւնը հակառակ էր այդ օրէնքին, որի համար հայերի բողոքների դիմաց հրովարտակներ եւ հրամանաթղթեր են տրուել, որպէսզի այդ օրէնքը ներգործութիւն չունենայ, սակայն կրօնապետերի պաշտպանութիւնն ոյժ էր տալիս ուրացողներին: Այդպէս պարագաներում, վախճանածի տունն էր թափուում մոլլաների եւ այլազգիների բազմութիւնը եւ վախճանեալի ընտանիքին ու զաւակներին դուրս էին հանում այդ տնից, փակում էին սենեակների եւ տան դռները եւ կնիք էին դնում դրանց վրայ, որպէսզի այդտեղից ոչ մի բան չպակսի: Օրէնքով պաշտպանում էին, որ վախճանած քրիստոնեայի ինչքը ժառանգութիւն հասնէր ուրացեալին: Եթէ վախճանւածն իր կենդանութեան ժամանակ իր բոլոր ստացածքը կտակած էր լինում ուրիշի կամ իր ժառանգներին եւ կամ յիշատակի տւած էր լինում եկեղեցիներին, որ «վաղֆ» էր կոչւում, այդպիսի դէպքերում նորից կրօնապետը կտակագրի կամ վաղֆագրի խօսքերում մի ինչ որ պատճառ փնտ-





րելով՝ պարտաւորեցնում էին քրիստոնեաներին մեծաքանակ գումար վճարել ուրացեալներին եւ խաղաղութիւն անելով՝ վերջացնում էին խնդիրը:

Մասնաւոր Պատճառներ

ա.- Թէեւ մասնաւոր թոււմ դասեցինք դիւանի հրամանակատար ծառաների հասցրած հարստահարութիւնները, սակայն խիստ չարագոյն էին տանջանքները, որոնք հնարուում էին նրանց կողմից: Նրանք, ինչպէս հրէշներ, գուրկ գորովից եւ մարդկային գութից, տառապած ջուղայեցիներին բռնելով՝ կապում, կաշկանդում, ծեծում եւ հարւածելով դնում էին արգելակների մէջ եւ շիկացած երկաթով նրանց ոտքերը պրկում էին արգելակներում, քնաթափ էին պահում, մախաթ թին մխրճում նրանց կողքը եւ եթէ նրանց աչքերը քնով ծանրանում էին, յարդի ծխով յեղձանահ էին անում եւ այնպիսի չարահմար տանջանքներ էին ստեղծում, որ մարդ սոսկում էր. այդ անէնը կատաղութեամբ բարդում էին ջուղայեցիների գլխին՝ ստանալու համար թագաւորից հրամայածը

եւ ձեռք բերելու նոյնչափ կամ կէս չափով գումար՝ իրենց անձնաշահութեան քաղցը յագեցնելու համար:

բ.- Մեծ եղան այն վնասները, որ ջուղայեցիք կրեցին ազգայինների մատուութեամբ, որովհետեւ ժողովրդի միջից դատարկապորտներ, շւայտ խօսողներ եւ համարձակներ, որոնք խիղճ չունէին, որ Աստուծոյ վախենային եւ ո՛չ էլ՝ մեծութիւն կամ ինչք, որ գողերից կասկած ունենային, զրպարտութիւն էին հնարում եւ վնասակար սուտ էին ձգում Ջուղայի այս կամ այն իշխանի վրայ, որի հետ քինախնդրութիւն ունէին կամ նախանձում էին նրանց հարստութիւնը, եւ չարախօսում էին այլազգի բռնակալների մօտ, որոնք քրիստոնեաների արիւնին ծարաւ լինելով՝ այդ մատնիչների խօսքերը ճշմարտութեան հիմ ունենալով՝ ծառաներին ուղարկում էին տուգանքի ենթարկել կամ կեղեքել մատուածներին: Այստեղ յիշատակութեան արժանի են համարում 1240(1791) թի Նոյեմբերի 1-ին Բաղդադից Աղա Մարգար Աւետ Խալիլարեանի գրածքը Ջուղայի Միքայէլ եւ Ստեփանոս

Վարդապետներին, որ խորին ցաւակցական խօսքեր են մատնիչների չարութեան մասին:

գ.- Կեղեքումների եւ տուգանքների հրաման լինելու եւ հասնելու ժամանակ, ջուղայեցիները պատրաստ դրամ չունէին հատուցելու համար, որովհետեւ վաճառականներ լինելով՝ հեռաւոր սահմաններ էին ուղարկում իրենց դրամները, որի համար տանջանքների բնութիւնից ճարահատուած դիմում էին այլազգիներին եւ ծանր տոկոսով փող էին վերցնում՝ հատուցելու բռնակալների պահանջները:

դ.- Բազմաթիւ հարստահարութիւնների պատճառով, որոնցից իւրաքանչիւրն անտանելի էր, բացի այն որ շրջապատուած էին տասնավտակ յորձանքներից, ջուղայեցիներն այդ խիստ անիրաւութիւնից յուսալքուած, ինչքան կարողացան կիսագին վաճառեցին իրենց ինչքն ու ստացածքը, իսկ մնացածները լքելով՝ բաց ձգեցին, եւ երես դարձնելով հայրենիքից՝ խոյս տւեցին հեռաւոր սահմաններ՝ իրենց անձերը փրկելու համար:

Այդ հարստահարութիւնների տասնավտակ յորձանքներից յետոյ, Ջուղայում նւագելով նւագեցին եւ պակսելով պակսեցին դրա բնակիչները՝ գաղթականութեամբ դէպի հեռաւոր եւ օտար սահմաններ խոյս տալով, ուստի պէտք չէ զարմանալ, երբ նկատենք, որ 250 տարիների ընթացքում Ջուղայի 12,000 տուն բնակիչների թիւն իջաւ 300 տուն:

Սակայն, գովեստի արժանի է ասել, թէ՛ ջուղայեցիներն ինչպէս յորձանքների մէջ նահատակներ, նրանց չափ համբերատար լինելով խոշտանգումների եւ դառը չարչարանքների դիմաց՝ մնացին եւ մինչեւ այսօր մնացել են աստուածապաշտութեան հաւատի մէջ, չխառնելով հեթանոսների հետ եւ չսովորելով նրանց գործելակերպը:

կաթողիկոսի հետ ես էլ թեհրան էի գտնուում եւ գնացիմք «Ահարոնեան» մանկապարտեզի հիմնարկէքին: Նա իր մասնակցութիւնն էր բերում ոչ միայն իր նիւթականով, իր ոգիով, իր էութեամբ:

